



81. ԼԵՔԿԱՐ ԿՐՆՐԿ

Մարթըմ կը յաճ նեծիր, կաքավըմ կը զանը, կը պիրը տուն,
ուր կընգան կըսը. - Իփը՛, ո՛ւտընք:

Կընըկ կիփը, կը տա ուր յարուչ:

Մարթ կը կա՛, կըսը. - Կաքավ պի՛, ուտընք:

Կըսը. - Մարթի՛կ, վոլա՛, կատուն կիրիր:

Կըսը. - Պա՛՛մ չը մընացի՞ր:

- Վոլա՛, չը՛ մընացիր, զըմեն կիրիր:

Էրկու շապա՛ս հա՛ր կէրթա նեծիր՝ յան կաքավ, յան կազ, յան
լըպըզտրակ կը պիրը, լա՛ տիր՛մ էլ չո՛ւտը:

Իրիկ կըսը. - Կընըկ, իս հա՛սօր տը յամ՝ էլմէլ տը պիրիմ:

Կէրթա կազըմ կը պիրը, կըսը. - Կընըկ, մա՛ կազ իփը՛,
ուտինք. իս տընեն չըմ էրթա, չուր իփը՛ ուտիմ. էնկանդա՛ր պիրը,
տիր՛մ էլ չըկերա:

Կընըկ ա՛տ օր ուր յարուչ կըսը. - Տեղըմ չէրթաս, հա՛սօր կազ
տը պիրիմ՝ խըղդա՛ց ուտինք:

Կազ իտը վա՛ր անքթա՛ն, իփից, իրիշկից՝ մարթ տընեն չէր-
թա տա՛ւս, սաց. - Մարթի՛կ, տա՛ւ վըրե՞ չըս ի՛յա տընեն:

Էսաց. - Վոլա՛, կընըկ, չուր չուտիմ՝ չըմ ի՛յա:

Կընըկ մընաց շիվար, ուր միտվե սաց. «Իս ի՞նչըիս անիմ, իմ
յար խապիցը»:

Մալիա՛զա՛ արավ, էսաց. «Իս լեբըմ չը տամ հինը՝ իմ պան
բոշ ը»:

Էլնվ, մըտավ ուր մառան ընը, մառանից իրը, էսաց. - Մարթիկ, իսկ հասօր էրագըմ տեսա, մի ճաշ կազ էր, տաւ էլնր, կանցիր ժամտան տառ, մարթըմ իրը, կայնավ խն քաւ կըշտին, տաւ զան մարթ պիրիր մի տուն՝ ճաշ:

Մարթ ուր միտվե էսաց. «Իս տ'երթամ ժամտան տառ, որ անցկուն իլնը, իս զան մարթ տը պիրիմ ճաշ»:

Էլնվ. կըննաց ժամտան տառ:

Կընըկ վնգկից մնտ յար, էսաց. - Ապա իս ի՞նչըխ անիմ, ան կըրողուտ իրիկ չէրթա տաւս, որ իս ան կազ պիրիմ՝ իս, տաւ ուտինք:

Էսաց. - Պան չա՛նը, հասօր թըխ ան ուտը:

Կըսը. - Չը՛, իս հերտըվցիր իմ, բե քյի չըմ ո՛ւտը:

Յար էսաց. - Ապա իս ի՞նչըխ անիմ:

Էսաց. - Իս քյի շիրնթըմ անիմ. իմ իրիկ տը յա ժամտան տառ, տաւ էլ կըննա՛ ժամտան տառ, քաւ թիվ տո՛ւ իմ իրկան թիվ. իմ իրիկ ըզքյի տը պիրը մի տուն, որ իս, տաւ խըդրնաց ուտինք՝ իմ սեռտ ռանհնթը:

Կընըկ տանցավ տուն: Յար մըժլնվ, չըկըննաց ժամտան տառ: Մեկ ուտար մարթըմ իրը, կայնավ խնտ անու իրկան կըշտին:

Մարթ միտվե էսաց. «Իմ կընգան էրագ շըտնակ էր. իս նա մարթ տը տանիմ մի տուն՝ ճաշ»:

Էլնն, քանցին տուն: Կընըկ հանեճկվե իրիշից, կը խը՝ ուր յար չը:

Իկին տուն, էսաց. - Կընըկ, խա՛ց պի՛ իս, իմ մեհվան ուտինք:

Կընըկ շիվարավ, կըտուրըմ մըժլնվ, էճավ նըրքըն տուն, գորթիկ իթուղ, քյշից մանչ տըրկըցը առտին, էլնվ, տանցավ տուն, էսաց. - Մարթ, ի՛լը լագ, մի որթիկ գի մն մի տըրկըցը առտին. կըննա՛, պի՛ տուն, չուր իս խաց տընիմ:

Իրիկ էլնվ, կըննաց թնխ որթիկ, կընըկ էլնվ, ամա՛մ տաք ճաւր էխան, սախեն իպը, սանդու քնր իպը, սապուն իպը, զան սանդու քնր իտը մանչ սախենին, սապունով լըվնց:

Մեհվան էսաց. - Մարե՛, նտ սանդու քնր ի՞նչ կը լըվնս:

Էսաց. - Քյի հնպով կը լըվնս:

Էսաց. - Վըրե՞ ծի հնպով կը լըվնս:

Էսազ. - Իմ կյրողուտ իրիկ հոր մարթըմ կը պիրը մի տուն,
նա սանդու քար կը զարկը անու ոռ: Իս քյի խեխն կանիմ, ան
հապով տը լըվամ, որ քու ոռ չըցավը:

Մեհվան էլավ, տընեն փախավ, կընըկ էլավ, ըզկազ առից,
պախից յարուչ խանար:

Իրիկ իրը, Էսազ. - Կընըկ, հո՞ւր ը ան մարթ:

Էսազ. - Կյըրո՞ղ ան մարթ տաներ. էզար, ըզկազ առից,
փախավ:

Իրիկ Էսազ. - Կընըկ, մըհա էրկու խա՛ց տու ծի, իս էրթամ
հիտիվ ան մարթուն:

Էլավ, կյընաց հիտիվ ան մարթուն, անիկ իրիշկից՝ ան
տանտեր կը վազկը հիտիվ անու, ան մարթ վախացավ, Էսազ. - Իս
տը փախիմ, դորիս ան մարթ ըզսանդու քար առից, իրը:

Անիկ շատ փախավ:

Ան տանտեր կանչից, Էսազ. - Մը՛ փախը, իս կան՝ հանա մեկ
տիրըմ խազ մըտուցիմ մեչ:

Անու խալըվկեն, թը սանդու քարն ը, կը պիրը, որ զարկը
անու ոռ:

Ան մարթ Էսազ. - Պարեկան՝, իս քյի գա չը՛մ կիրիր, մի՛ կա:

Ան տանտեր կը կանչը. - Կա՛յնը, մեկ տիր զարկիմ հինը՝
բան ը:

Անիկ քանց հանա՛ն լազ կը փախը:

Մարթ շաթ վազկից, նեղացավ, Էսազ. - Դարան ը, ախըր, իս
կազու միս չըկերա:

Էլավ, իրը տուն:

Կընըկ Էսազ. - Մա՛րթ, ի՞նչըխ արիր:

Էսազ. - Վոլա՛, կընըկ, չըխասա:

Էսազ. - Քու սուջն էր. տու ան մարթ տը չըպերեր:

Էսազ. - Ապա իս ի՞նչըխ աներ: Պիրը՝ չէլավ ծի կըսմաթ:

Կընըկ ըզկազ տարավ իտու յարուչ, էլմէլ իրիկ մընըց
անուտիլ:

